



ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՑԵՐԵԿՈՒՅԹ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ ՆՎԻՐՎԱԾ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ԾՆՍԴՅԱՆ 250-ԱՄՅԱԿԻՆ

Հոկտեմբերի 24-ին, հինգարթի, հետմիցօրենք ժամը 3-ին, Հոգևոր Ճեմարանի հանդիսարանում տեղի ունեցավ գրական-գեղարվեստական ցերեկույթ՝ նվիրված հայ երգի արքա, ժողովրդական մեծ գուսան և տաղանդավոր քնարերգակ Սայաթ-Նովայի ծննդյան 250-ամյակին:

Հանդիսության նախագահում էր Գերագույն Հոգևոր Խորհրդի առենապետ գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը:

Հորելուանական տոնակատարությանը ներկա էին Մայր Աթոռի միարանությունը, Հոգևոր Ճեմարանի վերատեսչական, դասախոսական կազմը և ուսանողությունը, վանքի պաշտոնեալիունը և հրավիրյալներ:

Հանդիսությունը բացվելում է Հայկական ՍՍՌ Պեսական հիմնի նվագով:

Հոգևոր Ճեմարանի ավագ վերակացու Հովհաննորհ Տ. Գրիգոր վարդապետ ներկայանը հանդես է գալիս ներածական խոսքով:

Ճեմարանի երգչախումբը փայլուն հաջողությամբ կատարում է «Քամանչա» խմբերգը: Առաջին լսարանի ուսանող Ղևոնդ Վարդանյանը ապրումով արտասանում է «Աշխարս մեծ փանջարա է» բանաստեղծությունը:

Օրվա գլխավոր բանախոսն է Հոգևոր Ճեմարանի հայոց յեղվի և գրականության դասախոս Գրիգոր Գյուլյանը, որն իր բովանդակայից զեկուցման մեջ հանգամանորեն վերլուծելով Սայաթ-Նովայի անցած գրականութիւնը և ստեղծագործությունը, ասում է.

«... Սայաթ-Նովայի ստեղծագործությունը մի վառ վկայություն է մեր ժողովրդի բնավորության մասին, նրա շուշանային մաքրությամբ հոգեկան բարձր առաքինությունների մասին:»

Սայաթ-Նովայի ստեղծագործությունը մեր միշնադարյան տաղերգության օրգանական շարունակությունն է ու նրա ավարտումը միաժամանակի:

Սայաթ-Նովայի աշուղ է և լիրիկ մեծ բանաստեղծ: Աշուղ է, որովհետև նրա տաղերը գրված են խնցույքներում և հասարակական հանդեսներում երգելու համար: Աշուղ է, որովհետև նրա տաղերը գրված են ժողովրդական պարզ, հասկանալի լեզվով, հագեցված են ժողովրդական խոսքի գարձածքներով, համեմատության ներկերը վերցված են իրական, կոնկրետ կյանքից, տեսանելի ու շոշափելի իրականությունից: Նրա տաղերում բացարձակակես բացակայում են վերացական ընդհանրացումները, որոնք բնորոշ են դասական գրականության համար: Ժողովրդական, գուսանական երգի բնորոշը՝ պարզությունն ու անմիշականությունն է: Գուսանական երգերում խոսքը պետք է լինի կարճ, դիպուկ, թևավոր, կոնկրետ և նպաստակասլաց: Գուսանական երգը չի սիրում ճախարակյալ, գարձարձիկ, բարդ ու վերամրած, ճոռճոռ լեզվական դարձվածքներու: Նա սիրում է շնչել հողի ու արևի բուրով: Գուսանական երգերի բնորոշ առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ տաղի վերջում գուսանը պետք է

հիշատակի իր անունը և տաղն անձնականացնի՝ այն կապելով իր կենսափորձի և աշխարհայեցողության հետ:

Սայաթ-Նովան լիրիկ մեծ բանաստեղծ է, որովհետև իր տաղերի թեմաները խորապես անձնականացված են՝ դուրս եկած աշուղական պարզության սահմաններից: Նա օժտված է բանաստեղծական խոշոր երևակայությամբ և անկրկնելի ավլումով: Նա տարիքով բանաստեղծ է: Նրա պարզությունը դժվարանվաճ պարզություն է: Էժան, պրիմիտիվ պարզություն չէ: Նրա պարզությունը համոզի արտահայտության բյուրեղացումն է: Նրա բանաստեղծական քառասողերը աղամանդակուտ կառուցվածքը ունեն: Դրանք ոչ թե գոված, այլ քանդակված տողեր են, հնչում են անսխավական երաժշտականությամբ: Վերցնենք՝ նրա տասնվեցվանկանի քառանդամ լայնաշունչ «Քամանչա» նշանավոր բանաստեղծությունը՝ զուտ կատարողական վարպետության տեսակետից, համոզվելու համար, որ մեր հանձարեղ Սայաթ-Նովան ոչնչով չի զիշում քառակի անզուգական վարպետ Օմար Խայամին:

... Սայաթ-Նովան սիրո աննման երգի է: Նա մեր բանաստեղծության մեծագույն սիրերգակն է....

... Սայաթ-Նովան առանձին վերցրած՝ բնության երգի է: Բայց նրա սիրո տաղերը ներթափանցված են բնության շենշող պատկերներով: Բնությունը շնչում է նրա տաղերի մեջ, մերթ որպես հոգին բաց արած մանիշակ», մերթ «Ճյուղի տակեն նոր դուրս եկած ծաղիկ», մերթ «վարդին փաթաթված ուհան», մերթ սուսան սմբուլով լցված բաղ, մերթ կարմրավուն դաշտի ծաղիկ և հովտաց շուշան և այլն....

Բացի սիրավին երգերից, որոնք իր ստեղծագործության թագն ու պարծանքն են, Սայաթ-Նովան գորել է նաև փիլիսոփայական բանաստեղծություններ՝ հագեցած սոցիալական խոր բովանդակությամբ: Այս կարգի երգերի մեջ ի հայտ է գալիս մեծ կենսափորձով մարդասեր խոշոր բանաստեղծություններուն համարած է իր ուամկությամբ, ժողովրդական ծագումով: Նա մի տեղ, արժանավորության մեծագույն դպացումով, հաւատարում է. «Յիս ուամկի իմ, թափառութին չիմ ուզում» եվ ուամկի Սայաթ-Նովան դարձավ ուամկի, խալիս նորարը.

Արի, նամով զուզուղ արա, խալիս նոյնական Սայաթ-Նովան Ով իիզի լիդի պարմիլե, դուն տու շաբար, Սայաթ-Նովան:

Եվ իրոք, միջնադարյան խավարի պայտաններում, նրա երգերը դարձան այն սպեղանին, որով ամոբվեցին աշխատավորու-

թյան խոցված սրտերը, Սայաթ-Նովան իր հոգու ամբողջ ուժով սիրած է աշխատավոր մարդուն, նրան, ով ստեղծում է կյանքի բարիքները: Նա մեծ մարդասեր է, թեև հպարտ է իր հայկական ծագումով: Բայց նա հպարտ սար սիրով սիրում է բոլոր մարդկանց: Իր երգու պարով, անմահ քամանչով դրանց նորարությունը է անում: Նրա հոգեւոր ճոխ սեղանից հավասարապես հրապուրվել են և հայրը, և վրացին, և աղբբեշանցին: Նա իր երգերը հավասար հաջողությամբ գրել է երեք լեզուներով՝ հայերեն, վրացերեն, աղբբեշաներեն, երկու հարյուր տարի առաջ իրագործելով անդրկովկասյան երեք ժողովուրդների հոգեւոր կուտարայի միասնության իդեալը: Հայ ժողովուրդը, որի սրտում միշտ բոցկլտացել է ժողովուրդների եղբայրության սրբազն կրակը, կարող է հպարտանալ իր մեծ, անմահ զավակով:

Ասիհական բռնապետության պայմաններում կաշկանդված մարդկային զգացումները կապանքներից աղատելու ձգտումն է, որ արտահայտվում է Սայաթ-Նովայի ստեղծագործության մեջ: Սրանով նրա բանաստեղծությունը ստանում է համամարդկային բովանդակություն և հասկանալի է զառնում երեկ՝ իր ժամանակակիցներին, իսկ այսօր՝ համայն մարդկության:

Սայաթ-Նովան զգացել ու տեսել է խալիսի վիճակը, գիտակցել է խալիսին նորարություն անելու անհրաժեշտությունը: Նա չի ձգտում թավադության, գիտի, որ կյանքում արժեքավորը ոչ թե աղնվականությունն է, այլ հոգեկան աղնվությունը, արդարությունը, ճշմարտությունը:

Խալիսին ծառայություն մատուցելը, նրա համար կամուրջ կառուցելը, անց կենողի կողմից բարի հիշվելը այն միակ հարստությունն ու փառքն է, որին ձգտում է բանաստեղծը:

Հողմերի ու հեղեղների զեմ միակ փրկությունը, ճշմարտությունն անմահ գարձնելու միակ միջոցը նա համարում է «հոգու տռանն ամուր ու հիմնավոր» կառուցելը, մարդկային հոգին ժայուի նման հաստառն պահելը.

Հոգու տռեր շինն դայիմ, նիմնավոր՝ նոյի նման՝ սելավից էլ ան չկա:

Սայաթ-Նովան լիրիկ բանաստեղծ է՝ սոցիալական խոր ընդհանրացումները նա տալիս է մասնավոր, անձնական պատկերներով: Հանձին նրա բողոքում է կեղեքված, անիրավված, կաշկանդված աշխատավորը.

Ղարիբ իմ, արոն իմ լալի
Դժար դարի հանդիբելով.
Տեր իմ կանչում կսկրծալի
Կինքում շարի հանդիբելով:

Սայաթ-Նովայի իմաստությունը ժողովրդական իմաստություն է, սնվում է ժողովրդի հաղարամյակների կենսափորձից:

«Պայքարնով «դժար գարի» և «կյանքի շարի» գեմ՝ նա հասնում է այն բարձրագույն իմաստության, որ տիրողներից, խաներից ու շահերից, բարձր են մարդու հոգու անկաշկանդ ապրումները:

Յարը, ընկերը, օտարական-պանդուխտը, աղքատը, գիրն ու արվեստը, արդարությունը, ճշմարտությունը, հոգեկան ազնվությունը սիրելով է, որ մարդ պետք է պայքարի «դժար զարում» և կյանքի շարի» գեմ: Ահա Սայաթ-Նովայի իմաստությունը: Ենինարար, ստեղծագործ, արվեստագետ, ճշմարտասեր ու արդարասեր հայ ժողովուրդն է տվել Սայաթ-Նովային այդ իմաստությունը: Ենորհիվ այդ իմաստության, Սայաթ-Նովան այսօր դարձավ համայն մարդկության սեփականությունը: Ենորհիվ այդ իմաստության, Սայաթ-Նովան այսօր էլ առաջավոր մարդկության շարքերում է, այսօր էլ նա պայքարում է խաղաղության համար, ժողովուրդների սուրբ դաշինքի համար, ժողովուրդների եղայրության և երջանիկ ապագայի համար:

Սայաթ-Նովայով ամբողջանում ու ավարտվում է մեր միջնադարյան տաղերգությունը:

Նրա բանաստեղծական փառապսակը ամբողջանում է նահատակի լուսապսակով:

Սայաթ-Նովան և՛ իր կյանքով և՛ իր մահով նման եղավ իր ժողովրդին:

Հայ մեծագույն բնարերգակ Սայաթ-Նովայի անձեռակերտ արձանը բարձրանում է իր հավերժական ժողովրդի հավերժորեն սիրող մեծ սրտի մեջ:

Երգչուհի Սվետլանա Զաքարյանը իր «Բըլուի հիդ» և «Մե խոսկ ունիմ» սայաթ-Նովայական երկու երգերով կախարդում է դահլիճը:

Առաջին լսարանի ուսանող Գրիգոր Բունիաթյանը հուզումով արտասանում է «Ասացին», թե Շախաթա՛յի, խարար ունիս ալամեն»:

Երդշախումբը կատարում է «Ուստի» կուրքաս» խմբերգը:

«Արի համով զուլուղ արա» բանաստեղծությունն արտասանում է երրորդ դասարանի ուսանող Հակոբ Փանոսյանը:

Սիլվա Կապուտիկյանի «Սայաթ-Նովա» բանաստեղծության փայլուն արտասանությամբ հանդս է գալիս երկրորդ լսարանի ուսանող Եղիշե Բաղրամյանը:

Սայաթ-Նովայի ծննդյան 250-ամյակին նվիրված գրական-գեղարվեստական ցերեկույթը եղագակում է պէջմիածին ամսագրի խմբգիր և Հոգևոր Ճեմարանի դասախոս Արթուր Հատիայանը:

«Այս շաբաթ, հոկտեմբերի 26-ին, մեր ժողովուրդը, իր հարազատ հայրենի պետության հովանուտակ, համազգային շքով և հանդիսությամբ, նշում է իր արժանավոր մեկ զավկի, Ժողովրդական մեծ աշուղի և քնարերգակի՝ Սայաթ-Նովայի ծննդյան 250-ամյակը:

Հայ ժողովրդի հետ, Սովետական Սիության եղբայրական ժողովուրդները, համայն աշխարհի առաջավոր մարդկությունը, սրտագին երախտագիտությամբ, նշում են խոշոր հումանիստի, Անդրկովկասի ժողովուրդների բարեկամության և նրանց լավագույն իղձերի արտահայտիչ Սայաթ-Նովայի ծննդյան 250-ամյակը:

Ավելի քան 200 տարի, Սայաթ-Նովայի երգերը հնչել են նոր ուժով և թարմությամբ բոլոր ժողովուրդների համար, որովհետեւ, ինչպես նշել է Հովհաննես Թումանյանը, Սայաթ-Նովան «գեղեցիկ ձևի մեջ մի մշտական հուր հոգի է, մի ազնիկ և լիբը սիրտ, մի հարազատ հոգոր շունչ, որ մեր աշխարհքի հարազատ շնչի նման միշտ խաղալու է կովկասի ժողովուրդների վրա»:

Ուստի մեծ գրականագետ Վալերի Բրյուսովը Սայաթ-Նովային դասում է իրավամբ առաջնակարգ այն բանաստեղծների շարքին, «ուրուք իրենց հանճարի զորությամբ դադարում են մեկ ժողովրդի սեփականությունը լինելուց, բայց դառնում են ողջ մարդկության սիրելինք»:

Այսօր էլ մեզ հետ է Սայաթ-Նովան՝ մեր աշխատանքում, մեր որոնումների մեջ, հանուն լսվ կյանքի մեր պայքարի մեջ: Նա սովորեցնում է մեզ «Համով զուլուղ անել» մեր ժողովրդին և առաջավոր մարդկությանը»:

Սայաթ-Նովայի ծննդյան 250-ամյակին նվիրված ցերեկույթը վերջանում է նախագահ Արքային հոր աղոթքով:

